

Ճ Շ Տ ՈՒ Մ Ն Ե Ր

Մ Ի Ն Ա Ս Ա Մ Թ Ե Յ Ի Ի Մ Ա Ս Ի Ն

(ՆԻՒԹԵՐ՝ ԶՆՔՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 7-8, էջ 193)

Ա. ԱԼՊՈՅԱՆՆԻ ՍԽԱՆՆԵՐԸ

Մինաս Ամթեցու մասին Չնքուշի վերաբերեալ Ա. Ալպոյանեանի սխալները, աւելի ճիշտ՝ խեղաթիւրումները կը սկըսին Ամթեցու եպիսկոպոս ձեռնադրուած օրէն: Այսպէս, մինչ Հ. Ն. Ակինեան կը գրէ. «1666ին Մինաս երուսաղէմ կ'երթայ եւ ուրիշ երկու նուիրեալներու հետ եպիսկոպոս կը ձեռնադրուի եղիազար հակաքոռ կաթողիկոսէն» (Հ. Ա. 1960, թիւ 7-9), լռելով ո՞ր քաղաքի, ո՞ր թեմի վրայ ձեռնադրուելու մասին, Ա. Ալպոյանեան, իւրայայտուկ «հաւանօրէն»ը օդնութեան կանչելով, կը գրէ. —

«1666ին երկու վարդապետներու հետ (Մինաս Ամթեցին) եպիսկոպոս կը ձեռնադրուի երուսաղէմի մէջ եղիազար Այն-րապիէն, հաւանօրէն Զնքուշի վրայ, ուր էր 1680ին» («Պատմութիւն Եւզոկիոյ Հայոց», էջ 646):

Կրկնութենէ խուսափելու համար՝ զանց կ'ընենք այստեղ մեր պատուութիւնները «հաւանօրէն Զնքուշի վրայ» բառերուն այլանշանօրէն «ուր էր 1680ին» բառերուն կցուելուն մասին (Այդ դիտողութիւնները հանգամանօրէն կատարած ենք մեր «Զնքուշն անիրաւած» յօդուածին մէջ. «Բազմավեպ», 1964, քիւ 4-6, էջ 125-126), կ'անցնինք ուղղակի սխալին ճշտումին:

1666ին Չնքուշի առաջնորդն էր Մարկոս վարդապետը, եւ այս ո՛չ թէ «հաւանօրէն» այլ ստուգապէս — «եւ անկէ

(Զնքուշի Յոսիանէս վարդապետէն) ետք, նոյն քուականին, ՌՂԲ (1643) տարին աքոռ կը յաջորդէ անոր աշակերտը Մարկոս վարդապետ Հացուտցի (Հացուտար Չնքուշի մօտիկ փոքր գիւղ մըն էր) ... ՌՃԻԸ (1679) քուականին վախճանեցաւ Մարկոս վարդապետը եւ ...» (Թ. Ա. Բ., էջ 458):

Ուրեմն, ճիշտ կ'ըլլայ բայ, 1666ին Մինաս եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ո՛չ թէ Չնքուշի, այլ Թոխատի վրայ, ուր մի քանի տարի առաջ զացած էր քարոզելու, ինչպէս տեսանք Հ. Ներսէս Ակինեանի վերաբերեալ մասին սկիզբը, եւ, անտարակոյս, սիրուած ալ էր: Զայս կ'ապացուցանեն Թոխատի մէջ իրեն աշակերտած զրիշները՝ Թոխատցի Միքայէլ եւ Զուգայեցի Մկրտիչ իրենց բոլոր յիշատակարաններուն մէջ, մինչեւ 1696, Մինաս Ամթեցին «արհեպիսկոպոս եւ դոկիակերտի» եւ «առաջնորդ Թոխատու» կոչելը (այս մասին բացատրած ենք ներկայ յօդուածի վերջամասին մէջ) եւ, մանաւանդ, Թոխատի մէջ Մինասի «հոգեւոր Տէրը»՝ եղիազար հակաթոռ կաթողիկոսը՝ Մինասին պէս «զոյ ու դաւատ»ի մը կարիքն ունենալը, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ:

Ա. Ալպոյանեան Թոխատի աւելի քան քառորդ դարու առաջնորդութիւնը, իր «հաւանօրէն»ներով, չըջափոխած, յետադաժ տարած է, Ամթեցին Թոխատի առաջնորդական աթոռին վրայ, ուրիշ